<<ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄԻՋՆ.
ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ
077 625662

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿԻ 18

<<22>> <<01>> 2024թ.
№ 0-7

ՀԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ

Հարգարժան Պարոն Մարզպետ

Տեղեկացվում է Ձեզ, որ «Բաղրամյանի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ում առկա է մաթեմատիկա /10 դասաժամ/,ինֆորմատիկա /4 դասաժամ/, թգհգ/2 դասաժամ/, տեխնոլոգիա տղաներ /1 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղ : Կից ներկայացվում է հայտարարության տեքստը:

Դպրոցի տնօրեն՝ Ն.Տոմիկյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի /գ.Բաղրամյան Պ.Սևակ 18/ մաթեմատիկա /10 դասաժամ/, շախմատ /5դասաժամ/ , ինֆորմատիկա /4 դասաժամ/, թգհգ-/2դասաժամ/ , տեխնոլոգիա -1 դասաժամ /տղաներ/ առարկաների ուսուցչի թափուր տեղի համար.

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

10) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափի,
11) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
12) անձը հաստատող փաստաթուղթ,
13) <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
14) ինքնակենսագրություն (Ձև5),
15) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
16) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
17) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
18) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկան են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի հունվարի 22-ից մինչև փետրվարի 2-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի փետրվարի 5-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի <<Բաղրամյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում.հասցեն՝ Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան Պ.Սևակ 18 :

Տեղեկությունների համար զանգահարել (077) 62-56-62 հեռախոսահամարով:

<<Բաղրամյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրենություն